ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Աղիրվում է Ամենայն Հայոց ՎԱԶԳԵՆ Ա
Վեհափառ Հայրապետերի հիշատակին

Բաց երկնքի տակ քարերը գիրք են,
Պատերը միտք են ու ավետարան,
Լույս գմբեթները քարեղեն ձիրք են
Ու խորանները՝ մատենադարան:

Մեհյանների մեջ քնած դարերը,
Այնքան մոտիկ են, այնքան իրական,
Որ թվում է, թե կամաց շոշափես,
Առասպելները պիտի արթնանան:

Կապույտ երկնքում ծիծեռնակները
Ճախրող մտքեր են ու ճախրող խաչեր,
Աբեղաների վեղարների տակ
Այստեղ ապրել են հոգևոր քաջեր:

Այս տաճարների կամարների տակ
Օծվել է կամքը, հավատը մարդու,
Անդուլ աղոթքով նա երագել է
Իր մեջ գտնելու օրհնանքը Աստծու:

Ու խտացել է քարի պես ամուր՝
Ապրելու տենչը, ոգին արարման,
Այստեղ աղոթել, աղոթել են լուռ,
Որ անմեղները երկինք համբառնան: